ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ԽՈԼԵՐԱՅԻ մեր երկրում երեւալու անակնկալ դէպքը և նորա ընդարձակ ծաւալումը Կովկասում և եւրոպական Ռուսիայում առիթ տուեցին «Մուրճ»-ի խմբագրութեանը սովորական ժամանակից աւելի ուշ հրատարակելու ներկայ №-ը՝ իւր բժիշկ աշխատակից Ն. Ումիկեանի յօդուածը այժմ հրատարակելու համար։ Դորա հետ կից տպւում է նաև պ. բժշկ. Վ. Արծրունու «Խրատները խոլերայի մասին»։

«ՄՈՒՐՃ»-Ի ՅԱՋՈՐԴ № 7-ը լոյս կը տեսնի միացած № 8-ի հետ օգոստոսի վերջում։

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ մասին ստացանք հետեւեալը.

«Թոյլ տուէք այս երկտող գրութիւնս զետեղել ձեր պատուական ամսագրի էջերում ի գիտութիւն ընթերցող հասարակութեան.

«Շատերը դիմում են ինձ նամակով իմանալու թէ «Մանկավարժական գրադարան» վերնագրով ժողովածուն երբ լոյս կը տեսնէ և թէ այդ վերջինի հրատարակութիւնը ինչու այսպէս ուշացաւ։ Հետեւեալ հանգամանքներն ստիպեցին ինձ «Մանկավարժական գրադարանի» հրատարակութիւնն ուշացնել. առաջին՝ որ յարգելի աշխատակիցներս իրանց յօդուածները շատ ուշացրին, նոյն իսկ շատերից առաջին հատորի համար խոստացած յօդուածներն սպասելով և ոչինչ չը ստանալով, ստիպուած էի մի ուրիշին դիմել կամ ինքս աշխատել այդ պակաս յօդուածի տեղ ուրիշը զետեղելու համար։ Երկրորդ՝ բաժանորդագրութիւնը շատ դանդաղ էր քայլում. մինչև այսօր ես շատ տեղերից բաժանորդագրութեան թերթերը չեմ ստացել, չը նայելով որ քանիցս անգամ դիմել եմ նոցա նամակով։ Վերջապէս «Մանկավարժական գրադարանի» առաջին հատորը պատրաստ է և այս ամիս կ'ուղարկվի յարգելի բաժանորդներին։ Լիայոյս եմ, որ միւս հատորներն աւելի ճոխ լինին և նոցա հրատարակութիւնն առաջինի նման այսպէս չ'ուշանայ, բա

որում խմբագրութիւնն աւելի կանոնաւոր կերպով տեղի կ'ունենայ, նամանաւանդ որ կ'ունենայ խմբագրական ժողովներ բաղկացած բանիմաց պարոններից։

«Վերջացնելով երկտող գրութիւնս, խնդրում եմ այն պարոններին, որոնց ձեռքին գտնւում է «Մանկավարժական գրադարանի» բաժանորդագրութեան թերթը, շուտով ուղարկեն ինձ հետեւեալ հասցէով՝ Боржомъ. Іоаннесу Бархударіанъ, дача садовника Гавріила.

Յովհաննէս Բարխուդարեանց»։

«ՆԱՏՈՒՐԱԼԻՍՄ ԵՒ ԷՄԻԼ ԶՈԼԱՆ» յօդւածը, որ անցեալ №-ից տպագրւում է «Մուրճ»-ում, ընթերցողներից շատերը կարծել են թէ թարգմանական է։ Հարկ ենք համարում, սակայն, յայտնել, թիւրիմացութիւնների դէմ առնելու համար, որ յօդւածի հեղինակ Ֆելիքսը «Մուրճ»-ի աշխատակից է։

ՊՐՈՖ. Գ. ԴՐ. ԽԱԼԱԹԵԱՆՑԻ ներկայ համարում տպւող գրախօսական յօդւածի առիթով պարտք ենք համարում յայտնել, որ նա ստացւած էր Մոսկւայից դեռ եւ մայիսի վերջին՝ «Մուրճ»-ի № 5-ում զետեղելու համար. սակայն, արդէն ուշ լինելու պատճառով, մի ամսով յետաձգեցինք նորա տպագրութիւնը։

ՍՏԱՑԱՆՔ՝ բացի իւր տեղում յիշածներից, նաեւ հետեւեալ նոր գիրքը՝
АНАНОВЪ, С. І., д-ръ. — „Абастуманъ и его цѣлебное значеніе“. Тифлисъ, типографія М. Д. Ротинянцъ, 1892 года, գինն է 1 ր. 60 կ. եւ ճանապարհածախս 25 կոպէկ։

ՎՐԻՊԱԿ. Ռուսական քրոնիկի յառաջաբան տողերում, երես 830 սպրդել է մի սխալ. տպւած է՝ «Ռուսական քրոնիկ վերնագրի տակ մենք կ'աշխատենք կարելիին չափ պարբերաբար, գէթ ամիսը մի անգամ «Մուրճ»-ի ընթերցողներին հաղորդել ռուսական կեանքին վերաբերեալ կարեւորագոյն փակտերը եւ այլն։ Պէտք է լինի՝ «գէթ երեք ամիսը մի անգամ»։ Եւ ամիսը մի անգամ լոյս տեսնող թերթը չէր կարող մի բան խոստանալ գէթ ամիսը մի անգամ, քանի որ դա ամենաշատն է ինչ նա անել կարող է։